ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25.03.2019թ.
ժամը 11 ⁰⁰

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,

Գնահատողներ՝

- ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀՎ ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,
- ՀՀ ՊՆ 31233 զորամասի տեխնիկ-մեխանիկ, ենթասպա Ծ. Մելքումյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ ՀՕՊ, ՌԷՊ կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զաղոյան:

Գնումները համակարգող՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, իսկ **«Այյունեթվորքս» ՍՊԸ**-ի կողմից տեխնիկական բնութագրերը ներկայացված են թերի, մասնավորապես՝ տեխնիկական բնութագիրը ներկայացվել է անգլերեն լեզվով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացի «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ից, որը ունի 1400 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտք, որը չի գերազանցում օրենքով սահմանված շեմը (առաջարկած գնի մեկ տոկոսը):

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է **«Այյունեթվորքս» ՍՊԸ**-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

27.03.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

«Այյուներթվորքս» ՍՊԸ-ն ահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները: Գնահատող հանձնաժողովը քննարկելով վերջինիս կողմից ներկայացված՝ ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի շտկված տարբերակը՝ որոշեց մասնակցի ներկայացրած փաստթաղերը գնահատել հրավերի պահաջներին բավարարող:

1.2 27.03.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից 1-ին չափաբաժնում **«ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն,** 2-րդ չափաբաժնում **«Այյուներթվորքս» ՍՊԸ-ն,** 3-րդ և 6-րդ չափաբաժիններում **«ԻՆԹԵՋ» ՍՊԸ**-ն, 4-րդ և 7-րդ չափաբաժիններում **«ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ**-ն իսկ 5-րդ չափաբաժնում **«Էտալոն-Լ» ՍՊԸ**–ն և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ) Տ. Մաթևոսյան

Գնահատող, Խ. Երիցյան

Գնահատող Ծ. Մելքումյան

Գնահատող Ռ. Զաղոյան

Գնումները համակարգող՝ Ա. Բաղրամյան